ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 69-Ա

13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 13-ի N 7 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ...10	Դեմ՝ ...0	Ձեռնպահ՝ ...0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ	----------	----------	----------
Ա. ԱՐՍԵՆՅԱՆ	----------	----------	----------
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ	----------	----------	----------

Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ ---------- ---------- ----------

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ ---------- ---------- ----------

Գ.ՂԶՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Բ.ՄԵԼԻՔՅԱՆ ---------- ---------- ----------

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ ---------- ---------- ----------

Ա. ՆԻԿՈՅԱՆ ---------- ---------- ----------

Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ ---------- ---------- ----------

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ---------- ---------- ----------

Զ.ՍԱՐԳՍՅԱՆ ---------- ---------- ----------

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 13-ի թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան)

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 20-ի թիվ 59 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական տարածքում գտնվող /բնակավայր՝ Բագրավան/, քաղաքացի՝ Վարդան Դվինի Գոմցյանին սեփականության իրավունքով պատկանող 08-022-0159-0006 կադաստրային ծածկագրով 20.30045 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0042-0036) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0022-0071) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0017-0033) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0017-0032) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0017-0033) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

12. Դրամական օգնություն տրամադրելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
ղեկավար Ա. Գևորգյան)

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող (քաղաք՝ Մարալիկ) հողերից (կադաստրային ծածկագիր՝ 08-003-0022-0072) աճուրդային եղանակով հողատարածք օտարելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
ղեկավար Ա. Գևորգյան)

14.Դրամական օգնություն տրամադրելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

15.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Լանջիկի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 4-ի թիվ 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի

ղեկավար Ա. Գևորգյան)

16. Արագած Պապոյանին <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 70-Ն
13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 110-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2021 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի «3000,0» թիվը փոխարինել«2700,0» թվով, 4823 (պարտադիր վճարներ) հոդվածի «1000,0» թիվը փոխարինել «1500,0» թվով, 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի «9000,0» թիվը փոխարինել «8000,0» թվով
2. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 01, դաս 01 (նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «300,0» թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4252 (մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «1500,0» թիվը փոխարինել «2000,0» թվով, 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «10000,0» թիվը փոխարինել «8500,0» թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի «3000,0» թիվը փոխարինել «4000,0» թվով, 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «0» թիվը փոխարինել «500,0» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ. ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ. ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա. ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ. ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա. ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 71

13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ ապրիլի 8-ի N 515-Ն որոշումը և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 20-ի N 4 և Անի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի N N 75-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 61-Ա որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

/Կազմված է 2021թվականի օգոստոսի 13-ին,

Բաղկացած է 7 թերթից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՄԲ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

----------Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿԻ <<ՌՈՄԻ ԲԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2021 ԹՎԱԿԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 71 ՈՐՈՇՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ»համայնքայի ոչ-առևտրային կազմակերպություն,այսուհետ հաստատություն, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:
Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Անի համայնքն է,այսուհետ հիմնադիր ,որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Անի համայնքի ղեկավարը:
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ»համայնքայի ոչ-առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի«Անի մանկապարտեզ»համայնքայի ոչ-առևտրային կազմակերպության իրավահաջորդը:
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի«Անի մանկապարտեզ»համայնքայի ոչ-առևտրային կազմակերպությունը ձևավորվել է Մարալիկի համայնքային նախադպրոցական հիմնարկի(հաշվառման համարը 222.180.00471)վերակազմակերպան արդյունքում վերակազմավորելու ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):
3. Հաստատության գտնվելու վայրն է՝ՀՀ Շիրակի մարզ,Անի համայնք, քաղաք Մարալիկ ,Ֆ. Ձերժինսկու փողոց 7-7/7
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատության անվանումն է՝
1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ»համայնքայի ոչ-առևտրային կազմակերպություն
2) հայերեն կրճատ՝ Անի համայնքի Մարալիկի «Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ»ՀՈԱԿ
3) ռուսերեն լրիվ՝Мараликский ,,Детский сад имени Роми Баронян"общинная некоммерческая организация Анийской общины Ширакской области Республики Армения
4) ռուսերեն կրճատ՝ Мараликский ,,Детский сад имени Роми Баронян" ОНКО Анийской общины
5) անգլերեն լրիվ՝ «Republic of Armenia Shirak Region Ani community Maralik kindergarten after Romi Baronyan »community non-profit organization
6) անգլերեն կրճատ՝ «Ani community Maralik kindergarten after Romi Baronyan»CNPO
6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման

միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք (anicity.am), որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.
3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.
4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.
5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:
21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:
22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:
23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:
24. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:
28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:
30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝
1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.
2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.
3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.
4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.
5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:
31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:
32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆառակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով

տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների

վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 72

13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Անի համայնքապետարանիի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 96-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 4-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ . 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի

ԹԻՎ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի

ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՁԱՓԸ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1	Աշխատողների քանակը՝ 78

2 Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)
	1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավար	1	1	450,0	450,0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	2	1	270,0	540,0
	Ընդամենը՝	3			990,0
	2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	250,0	250,0
2	Համայնքի ղեկավարի օգնական	2	1	180,0	360,0
	Ընդամենը՝	3			610,0
	3. ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1	Վարչական ղեկավար (մինչև 600 բնակիչ ունեցող Անիպեմզա, Անիավան, Աղին, Հայկաձոր բնակավայրերում)	4	1	220,0	880,0
2	Վարչական ղեկավար (601-1000 բնակիչ ունեցող Գուսանագյուղ, Շիրակավան, Բագրավան, Ջրափի, Լուսաղբյուր, Լանջիկ, Սարակապ բնակավայրերում)	7	1	240,0	1680,0
3	Վարչական ղեկավար (1001-1500 բնակիչ ունեցող Իսահակյան, Ձորակապ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերում)	4	1	260,0	1040,0
4	Վարչական ղեկավար (1500 և ավելի բնակիչ ունեցող Սառնաղբյուր բնակավայրում)	1	1	280,0	280,0
	Ընդամենը՝	16			3880,0
	4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԵԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
	Աշխատակազմ				
1	Աշխատակազմի քարտուղար	1	1	330,0	330,0
	Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ				
2	Գլխավոր մասնագետ	4	1	210,0	840,0
3	Առաջատար մասնագետ	5	1	180,0	900,0
4	Առաջին կարգի մասնագետ	3	1	160,0	480,0
5	Երկրորդ կարգի մասնագետ	20	1	145,0	2900,0
	Ընդամենը՝	32			5120,0

	Կառուցվածքային ստորաբաժանում				
	Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժին				
6	Բաժնի պետ	1	1	270,0	270,0
7	Բաժնի առաջատար մասնագետ	2	1	180,0	360,0
8	Բաժնի առաջին կարգի մասնագետ	4	1	160,0	640,0
9	Բաժնի երկրորդ կարգի մասնագետ	1	1	145,0	145,0
	Ընդամենը՝	8			1415,0
	Առանձնացված ստորաբաժանում				
	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Անիի տարածքային բաժին				
10	Բաժնի պետ	1	1	256,623	256,623
11	Բաժնի առաջին կարգի մասնագետ	1	1	133,602	133,602
	Ընդամենը	2			390,225
	5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
1	գործավար	1	1	130,0	130,0
2	էլեկտրիկ	1	1	180,0	180,0
3	տնտեսվար	1	1	160,0	160,0
4	վարորդ-մեխանիկ/ծառայողական ու սպասարկման ավտոմեքենայի/ՈՒԱզ /236324-101/	1	1	160,0	160,0
5	վարորդ/ծառայողական ավտոմեքենայի/	1	1	180,0	180,0
6	հավաքարար/վարչական շենքի/	1	1	120,0	120,0
7	ցերեկային պահակ-բակապահ	1	1	120,0	120,0
8	ակումբավար	2	1	110,0	220,0
9	Ավտոբուսի վարորդ	1	1	120,0	120,0
10	Միկրոավտոբուսի /17+1/ վարորդ	1	1	120,0	120,0
11	Մեխանիկ	1	1	120,0	120,0
12	Ընդհանուր բանվոր	1	1	110,0	110,0
	Ընդամենը՝	13			1860,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	78			14475,225

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 73

13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 20-ի թիվ 5-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 59 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ . 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՄԵՆՅԱՆ			
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ			
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ			
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ			
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 13-Ի ԹԻՎ 73 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 59 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)
	Վարչական ղեկավար				
1	Տնօրեն	1	250 000	1	250 000
2	փոխտնօրեն	1	170 000	1	170 000
3	Հաշվապահ-գանձապահ	1	150 000	1	150 000
4	Աղբահանության վարձավճարների գանձող	1	90 000	1	90 000
5	Բրիգադիր	1	140 000	1	140 000
6	Քաղաքային պուրակի պատասխանատու-պահակ	1	89 611	1	89 611
7	Ավտոպարկի պատասխանատու - մեխանիկ	1	140 000	1	140 000
8	Պահակ	3	140 000	1	140 000
9	Պահեստապետ	1	120 000	1	120 000
10	Եռակցող	1	120 000	1	120 000
11	Ավտովերանորոգող	1	110 000	1	110 000
12	Նիվա մեքենայի վարորդ-մեխանիկ	1	120 000	1	120 000

Աղբահանության ոլորտ

13	Աղբահանման և սանմաքրման մեքենայի վարորդ- մեխանիկ	1	160 000	1	160 000
14	Աղբաթափ մեքենայի վարորդ- մեխանիկ	1	195 000	1	195 000
15	Աղբաթափ մեքենայի վարորդ-մեխանիկ	1	195 000	1	195 000
16	Աղբահանող բանվոր	7	145 000	1	145 000

Սանմաքրման ոլորտ

17	Կամազ /ունիվերսալ/ և ասինիզացիոն մեքենաների վարորդ-մեխանիկ	1	150 000	1	150 000
18	Անիվավոր տրակտոր 1,4 վարորդ-մեխանիկ	1	120 000	0.5	60 000
19	Փողոցների սան. մաքրող հավաքարար	7	140 000	1	140 000
20	Կանաչ զոտիների սան.մաքրող բանվոր	1	140 000	1	140 000
21	Հավաքարար բնակավայրերի	8	100 000	1	100 000

Ջրամատակարարման ոլորտ

22	Կոյուղագծի բանվոր	1	110 000	1	110 000
23	Ընդհանուր բանվոր	1	110 000	1	110 000
24	Ջրագծի փականագործ վարչական բնակավայրերի, մինչև 1000 բնակչություն ունեցող	8	110 000	1	110 000
25	Ջրագծի փականագործ վարչական բնակավայրերի, 1001 և ավելի բնակչություն ունեցող	7	140 000	1	140 000
26	Ջրբաշ (Հայկաձոր բնակավայր)	1	110 000	1	110 000
27	Ջրբաշ և ջրագծի փականագործ (Զորակապ, Ջիթհանքով և Լանջիկ բնակավայրեր)	1	160 000	1	160 000

Ճանապարհային սպասարկման ոլորտ

28	Ինքնաթափ մեքենայի ՄԱԶ-555102-223 վարորդ-մեխանիկ	1	150 000	1	150 000
29	Ինքնաթափ մեքենայի վարորդ-մեխանիկ ՄԱԶ-551626-580-050	1	150 000	1	150 000
30	Էքսկավատոր-բեռնիչի վարորդ-մեխանիկ	1	185 000	1	185 000
31	Գրեյդեր ԳՍ-10.07 վարորդ-մեխանիկ	1	150000	1	150000
	Ընդամենը	**65**	**4359611**	**30.5**	**4299611**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 74
13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԲԱԳՐԱՎԱՆ/, ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎԱՐԴԱՆ ԴՎԻՆԻ ԳՈՄՑՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-022-0159-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 20.30045 ՀԵԿՏԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Դվինի Գոմցյանի /հետագայում՝ քաղաքացի/ 2021 թվականի օգոստոսի 9-ի հայտը՝ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 08-022-0159-0006 կադաստրային ծածկագրով 20.30045 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի հողամասում /վկայական N 29072021-08-0043/ Եվրո չափանիշներին համապատասխան 1600 գլուխ խոշոր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիների, որից 1200-ը կով, հզորության կաթնապրանքային ֆերմա /անասնապահական համալիր/ կառուցելու վերաբերյալ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի միավորված համայնքի ներքին ենթագոտու սահմանամերձ բնակավայրերի սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրի իրականացման կարևորությունը, ինչպես նաև շուրջ 350 նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունը,

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Անի համայնքի Բագրավան բնակավայրի տարածքում գտնվող, քաղաքացի՝ Վարդան Դվինի Գոմցյանին սեփականության իրավունքով պատկանող 08-022-0159-0006 կադաստրային ծածկագրով 20.30045 հեկտար գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի հողամասի /վկայական N 29072021-08-0043/ նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն՝ այդ հողամասում քաղաքացու կողմից գյուղատնտեսական արտադրական նշանակության կաթնապրանքային ֆերմա /անասնապահական համալիր/ կառուցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյանին.

1) Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությամբ պայմանավորված, պարտավորեցնել քաղաքացուն հողամասի նկատմամբ իրավունքներն ենթարկելու պետական գրանցման,
2) Սույն որոշմամբ նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունն արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:
3) Ապահովել կաթնապրանքային ֆերմայի /անասնապահական համալիր/ կառուցապատման գործառույթների իրականացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համարել փոփոխված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ հողամասի կառուցապատման ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ ... 10	Դեմ՝ ... 0	Ձեռնպահ՝ ... 0
Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ			
Ա. ԱՐՍԵՆՅԱՆ	բացակա է		
Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ			
Կ.ՀՈՎՍԵՓՅԱՆ			
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ			
Գ.ՂԶՐՈՅԱՆ			
Բ.ՄԵԼԻՔՅԱՆ	բացակա է		
Ա.ՆԱԶԱՐՅԱՆ			
Ա. ՆԻԿՈՅԱՆ			
Ա.ՈՒՌՈՒՄՅԱՆ			
Վ.ՍԱՀԱԿՅԱՆ	բացակա է		
Ա. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	բացակա է		
Զ.ՍԱՐԳՍՅԱՆ			
Ա.ՎԱՐՈՍՅԱՆ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 13
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 75
13 օգոստոսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ) ՀՈՂԵՐԻՑ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-003-0042-0036) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ մասերի և 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքում Ձերժինսկի փողոց 10/20 հասցեում բնակելի կառուցապատման հողամասում ավտոտնակ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 08-003-0042-0036) 0.00315 հեկտար հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
